

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 38/6

ք.Երևան

3 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 15.05.2018թ. N4101604 ակտի դեմ Ա/Ձ Մարինե Զիբուխյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ա/Ձ Մարինե Զիբուխյանը հայտնում է, որ սույն թվականի մարտի 21-ին Հայփոստի միջոցով ստացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՓՀՎ ՀՏ 30.03.2018թ. թիվ 4101604 հանձնարարագրի համաձայն կատարված ստուգման արդյունքում 17.04.2018թ. կազմված թիվ 4101604 ստուգման ակտի նախագիծը:

Այնուհետև, ստացվել է նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 15.05.2018թ. N4101604 ակտի օրինակը:

ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն հսկիչ գնման (գնումների) արդյունքում սույն հոդվածի 1-ին մասում նշված կարգերի և կանոնների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում հանձնարարագրի ներկայացման օրը երկու օրինակից կազմվում է հարկային մարմնի սահմանված ձևով արձանագրություն հսկիչ գնման ընթացքում կատարված խախտումների վերաբերյալ, որտեղ նշվում են նույն մասի 1-10 ենթակետերով սահմանված տեղեկությունները:

Նշված հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ 6-րդ մասով սահմանված խախտումների վերաբերյալ արձանագրության 2 օրինակներն արձանագրությունը կազմելու օրը ներկայացվում են հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Արձանագրությունը ստորագրում են հսկիչ գնում կատարող անձը (անձիք) և հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, ինչպես նաև հարկ վճարողի անունից ապրանքներ մատակարարող (վաճառող), աշխատանքներ կատարող աշխատողը (աշխատողները):

Հարկ վճարողը (գործադիր մարմնի ղեկավարը) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը արձանագրության հարկային մարմնի օրինակի վրա կատարում է գրառում այն ստանալու մասին և հանձնում է հարկային մարմնի պաշտոնատար անձին, իսկ արձանագրության վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում դրա մասին նշում է կատարում արձանագրությունում: Խախտումների վերաբերյալ արձանագրությունը ստորագրելուց և ստանալուց հրաժարվելու դեպքում այդ մասին հսկիչ գնում իրականացնող պաշտոնատար անձը (անձիք) համապատասխան

գրառում է կատարում արձանագրության օրինակների վրա և հարկային մարմնի կնքված արձանագրության պատճենը հարկ վճարողին է ուղարկում ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ նախագծի հետ:

ՀՀ հարկային օրենսգրքի 345-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ հսկիչ գնումների իրականացման կարգն ու պայմանները կիրառվում են նաև հարկային մարմնի կողմից հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության թեմատիկ ստուգման ընթացքում:

Այսպիսով՝ ինչպես վերը նշվել է, սույն թվականի մարտի 21-ին, փոստային առաքմամբ ստացվել է 30.03.2018թ. թիվ 4101604 հանձնարարագրի համաձայն կատարված և 17.04.2018թ. կազմված թիվ 4101604 ստուգման ակտի նախագիծը՝ 18.04.2018թ. թիվ 43 համարով ուղեկցվող գրությամբ, որտեղ նշված է, որ համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 342-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի ուղարկվում է 17.04.2018թ. թիվ 4101604 ակտի նախագծի մեկ օրինակը (առդիր՝ 2 թերթ):

Այսինքն, ակտի նախագծի հետ չի ներկայացվել ենթադրյալ հսկիչ գնման արձանագրությունը, որը վերը նշված հոդվածի համապատասխան մասերով սահմանված ընթացակարգի կոպիտ խախտում է:

Բացի այդ, Ա/Ձ Մարինե Չիբուխյանը խնդրում է հաշվի առնել այն հանգամանքը, որ նշված հանձնարարագրով իրականացված ստուգումն իրականացվել է նաև այլ խախտումներով և կրում է սուբյեկտիվ բնույթ: Մասնավորապես, նախորդ ստուգումն իրականացվել էր սույն թվականի փետրվար ամսին, որի արդյունքում 28.02.2018թ. կազմվել է թիվ 4100036 ստուգման ակտը և մեկ ամսվա ընթացքում փաստորեն հրապարակվում է թեմատիկ ստուգման երկրորդ հանձնարարագիրը՝ առանց վերլուծելու ֆիսկալային տվյալները:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Մարինե Չիբուխյանը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 15.05.2018թ. N4101604 ակտը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության պետի 30.03.2018թ. N4101604 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Մարինե Չիբուխյանի մոտ կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու և (կամ) աշխատողի համար գրանցման հայտ ներկայացնելու, ինչպես նաև հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգումներ: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 15.05.2018թ. N4101604 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել 300.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ գլխավոր հարկային տեսուչ Շիրակ Ծատուրյանի կողմից 10.04.2018թ. ժամը 14:50-ին ք.Իջևան, Երևանյան 126 հասցեում գտնվող մանրածախ առևտրի կետից կատարվեց գնում 500 դրամի չափով՝ 2 հատ հաց, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Ա/Ձ-ի աշխատակից Գայանե Դավթյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 14:53-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց «Z»

հաշվետվություն՝ 48590 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 500 դրամը, ժամը 14:55-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և նորից դուրս բերվեց «Z» հաշվետվությունը՝ 49.090 դրամ ընդհանուր գումարով:

ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1318-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն գնված ապրանքի արժեքի չմուտքագրումը ՀԴՄ դիտվում է որպես հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտում: Արդյունքում կիրառվել է ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված տուգանքը՝ 300.000 դրամի չափով:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածով սահմանված են հսկիչ գնումների իրականացման կարգն ու պայմանները:

Օրենսգրքի 345-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված՝ հսկիչ գնումների իրականացման կարգն ու պայմանները կիրառվում են նաև հարկային մարմնի կողմից հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշգրտության թեմատիկ ստուգման ընթացքում:

Օրենսգրքի 345-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հսկիչ գնման (գնումների) արդյունքում սույն հոդվածի 1-ին մասում նշված կարգերի ու կանոնների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում հանձնարարագրի ներկայացման օրը երկու օրինակից կազմվում է հարկային մարմնի սահմանած ձևով արձանագրություն հսկիչ գնման ընթացքում կատարված խախտումների վերաբերյալ:

Օրենսգրքի 345-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 6-րդ մասով սահմանված՝ խախտումների վերաբերյալ արձանագրության երկու օրինակներն արձանագրությունը կազմելու օրը ներկայացվում են հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Օրենսգրքի 345-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված արձանագրությունը կազմվել է, սակայն սահմանված կարգով Ա/Ձ Մարինե Չիբուխչյանին չի ներկայացվել:

Բացի այդ, Օրենսգրքի 345-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ հսկիչ գնման (գնումների) արդյունքում, հսկիչ գնում իրականացրած հարկային մարմնի պաշտոնատար անձի կողմից հանձնարարագիրը ներկայացվելուց հետո, բայց ոչ ուշ, քան հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքների վերադարձման համար սույն հոդվածի 13-րդ մասում նշված ժամկետները, հարկ վճարողին (գործադիր մարմնի ղեկավարին) կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին կամ ապրանքներ մատակարարող (վաճառող), աշխատանքներ կատարող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողին են վերադարձվում հսկիչ գնմամբ (գնումներով) ձեռք բերված ապրանքը (ապրանքները), պայմանով, որ գնումից հետո չեն փոփոխվել դրանց ապրանքային տեսքը և սպառողական հատկանիշները՝ երկու օրինակից կազմելով հարկային մարմնի ղեկավարի սահմանած ձևով ապրանքների հետ ընդունման ակտ:

Քննարկման ընթացքում պարզվեց նաև, որ ստուգման ընթացքում գնված ապրանքը չի վերադարձվել և ապրանքների հետ ընդունման համապատասխան ակտ չի կազմվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և

վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ դիմում-բողոքը ենթակա է բավարարման:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ա/Ձ Մարինե Զիբուխյանի դիմում-բողոքը բավարարել՝ անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 15.05.2018թ. N4101604 ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ